

Թէոդորոս Պատրիարք առաքեաց ընդ Հեօճէիքն, որ վասն երկից հետեւակ զղգաց զայլ Հրովարտակս եւ կարեւոր գրեանս, զորս առեալ էին յառաջին նորոգութեան բաժնին Հայոց 'ի տաճարին Ս. Յարութեան յաւուրս Շղթայակրի, որպէս խնդրեալ էր Փոխանորդ Պողոս վարդապետն. երանի թէ 'ի դատաստանի անդ լեալ էին նոքա 'ի ձեռս ազգին, որով անպատճառ Հայք շինէին զտեղիս իւրեանց. ահա արգիւնք առանց վաւերական գրոց 'ի դատ մտանելոյ: Գրեաց նաեւ զայլայլութիւն շինութեան Ս. Յարութեան, այլ անօգուտ: Յոյնք մտին նորոգել զեկեղեցին Լատինաց 'ի Ս. Յարութեան՝ որ չէր այրեալ, և կասկած մտանելոյ 'ի Ս. Լուսաւորիչ եկեղեցին Հայոց: Կուսակալն Նուսուֆ Փաշայ փախուցեալ 'ի Դամասկոսէ ապաստանեցաւ առ Թափառական Արարացիս, որում տըւեալ էր Պատրիարքն Հայոց 25,000 դահեկան, նոյնպէս Լատինք և Յոյնք, և աշխատէին առնուլ զգրամն 'ի Կոստանդինուպօլիս, եւ Սիւլէյման Փաշա կարգեցաւ 'ի տեղի նորա ('ի 23 Օգոստոսի):

Նեղութիւն պատերազմի և տագնապ նուազութեան հացի 'ի Կոստանդինուպօլիս, (1810. Նոյեմբեր):

### Գ Լ Ո Ւ Խ Ի Ե .

Աւարտուին շինութեան Ս. Յարութեան: Խափանուին տեղեացն Հայոց: Մէհմէտ Ապուլօղլութ: Եփրեմ Կաթուղիկոս: Նեղութիւնք միաբանաց: Ժողով 'ի գուռն մեծի գենդեափն և հրաման Արքային: Մախք շինութեան տաճարին: Գարձեալ ժողով 'ի գուռն գենդեափն:

**Յ**ՈՅՆՔ յերուսաղէմ արգելին զՀայս 'ի գերեզմանէ Ս. Աստուածածնի յաւուր տօնի վերափոխման եւ յայլ տօնս նորին, զի ասէին թէ 'ի շարաթու երկիցս ունիք պատարագել 'ի վերայ Սեղանոյ ձերոյ. նեղեալ աստի թէոդորոսի առաքեաց գրով 'ի Կոստանդինուպօլիս զՍարգիս անուռն ոմն 'ի միաբանաց, ծանուցանել զղգայնոց ըլխնդիրն՝ և գտանել զհնարն: